ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՀ պետական եկամուտների կոմիտեի 2021 թվականի մայիս ամսվա գործունեության վերաբերյալ

<u>Ընթացիկ աշխատանքներ</u>

Նախնական տվյալներով 2021 թվականի հունվար-մայիս ամիսների ընթացքում ԱՀ պետական բյուջե մուտքագրված հարկային եկամուտները և տուրքերը կազմել են 10,444.1 մլն դրամ՝ պլանավորված 6,050.0 մլն դրամ ցուցանիշը գերազանցելով 72.6 տոկոսով կամ 4,394.1 մլն դրամով: Հավաքագրված եկամուտները նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ թերակատարվել են 47 տոկոսով կամ պակաս է հավաքագրվել 9,244.2 մլն դրամ:

Մայիս ամսում ԱՀ պետական բյուջե մուտքագրված հարկային եկամուտները և տուրքերը կազմել են 2,231.1 մլն դրամ՝ պլանավորված 1,150.0 մլն դրամ ցուցանիշը գերազանցելով 94 տոկոսով կամ 1,081.1 մլն դրամով:

Հաշվետու ամսվա ընթացքում հարկային մարմնում հաշվառվել է թվով 111, լուծարվել՝ 27 տնտեսավարող սուբյեկտ:

Կառուցվածքային ստորաբաժանումների կողմից կատարվել է 5 ստուգում, որի արդյունքում լրացուցիչ հաշվարկվել են 15,3 մլն դրամի չափով հարկային և այլ պարտադիր վճարների գծով պարտավորություններ:

Նույն ժամանակահատվածում կատարվել են թվով 88 ուսումնասիրություններ, այդ թվում՝ 47-ը՝ հսկիչ-դրամարկղային մեքենաների ներդրման անհրաժեշտության, 17-ը՝ հարկային հաշվանցումների և վերադարձի հիմնավորվածության, 16-ը՝ լուծարային ու 8-ը՝ ակցիզային դրոշմանիշների շարժի և դրոշմավորման կանոնների պահպանման:

Հարկ վճարողներին սպասարկող ստորաբաժանումների կողմից ընդունվել և մշակվել է 10,194 հաշվարկ-հաշվետվություն, որից էլեկտրոնային եղանակով՝ 10,054:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով սահմանված կարգով քննված վարչական գործով սահմանվել է 15.0 հազ. դրամ վարչական տուգանք:

Էլեկտրոնային եղանակով հաշվետվությունների ներկայացման նպատակով հարկ վճարողների հետ կնքվել են թվով 44 պայմանագրեր:

Հիպոտեկային վարկի սպասարկման համար վճարված տոկոսների գումարների չափով վարձու աշխատողների և անհատ ձեռնարկատերերի կողմից վճարված եկամտային հարկի գումարների վերադարձի գործընթացի շրջանակներում մայիս ամսում կատարվել է վերադարձ 13 վարձու աշխատողի՝ 2.1 մլն դրամի չափով:

Եռամսյա ժամկետով հարկային արտոնություններից օգտվելու նպատակով գործունեությունը նոր սկսող 5 հարկ վճարողների տրամադրվել են հավաստագրեր:

Արցախի Հանրապետության ռեզիդենտ ոչ պետական կազմակերպություններին և անհատ ձեռնարկատերերին տրամադրվող պետական աջակցության միջոցառման շրջանակում հաշվետու ամսում եկամտային հարկի չափով աջակցություն է տրամադրվել 909 հարկ վճարողի՝ 258.7 մլն դրամ գումարի չափով:

Հարկ վճարողների ձեռնարկատիրական վարկերի (փոխառությունների) և տոկոսների փոխհատուցման նպատակով վճարված հարկերի գումարի վերադարձի ծրագրի շրջանակում բյուջե մուտքագրված հարկային եկամուտների հաշվին հաշվետու ամսվա ընթացքում կատարվել է 94.7 մլն դրամ գումարի չափով վերադարձ:

Մշակվել և ԱՀ կառավարության քննարկմանն է ներկայացվել ««Ավելացված արժեքի հարկի մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծը:

Հաշվետու ամսում ԱՀ կառավարության հաստատմանն են ներկայացվել «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2009 թվականի դեկտեմբերի 30-ի N 853-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին» և «Արցախի Հանրապետության տարածքը պատերազմական գործողություններից տուժած գոտի սահմանելու մասին» Արցախի Հանրապետության կառավարության որոշումների նախագծերը:

ԱՀ ՊԵԿ նախագահի հրամաններով սահմանվել են «Հարկ վճարողի վճարած հարկի գումարների վերադարձի դիմումի, հաշվետու ժամանակաշրջանում հարկ վճարողի կողմից ձեռնարկատիրական վարկերի (փոխառությունների) և դրանց սպասարկման համար հաշվեգրված տոկոսների գումարների մարումների մասին տեղեկանքի ու վերադարձվող հարկի գումարների վերաբերյալ եզրակացության ձևերը», փոփոխություններ կատարվել մի շարք հանձնաժողովների և աշխատանքային խմբերի անհատական կազմերում:

Ուսումնասիրվել են պետական կառավարման այլ մարմինների կողմից ներկայացված իրավական ակտերի նախագծերը:

Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության հարկային մարմինների համագործակցության ծրագրի շրջանակներում երկու կառույցների միջև իրականացվել են ԱՀ հարկ վճարողների կողմից ՀՀ մաքսային սահմանով կատարված ներմուծումների, արտահանումների, ՀՀ և ԱՀ սուբյեկտների միջև իրականացված գործարքների, անուղղակի հարկերի հաշվանցումների, ինչպես նաև հարկման հիմք հանդիսացող այլ փաստաթղթերի ու տեղեկությունների փոխանակման աշխատանքներ:

<u>Հասարակայնության հետ կապ</u>

Հարկային մարմնի պաշտոնական ինտերնետային կայքի միջոցով շարունակվել են հանրային իրազեկման աշխատանքները:

«Արցախի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ԱՀ օրենքին համապատասխան՝ Զինծառայողների ապահովագրության հիմնադրամից վերադարձ ստանալու նպատակով պատրաստվել և վարձու աշխատողներին ու անհատ ձեռնարկատերերին է տրամադրվել վճարված դրոշմանիշային վճարների չափի մասին թվով 18 տեղեկանք:

Մայիս ամսվա ընթացքում հարկային մարմին է մուտքագրվել 587, ելքագրվել՝ 341 նամակ-գրություն, որոնք ընթացքավորվել են ըստ գործող կարգի, այդ թվում՝ հարկային օրենսդրության դրույթների պարզաբանման նպատակով ներկայացվել է 8 գրություն, որից 3-ը՝ էլեկտրոնային և «Skype» հեռաձայնային ծառայության միջոցով: